«Արմավիր 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը ստեղծագործական և հետազոտական աշխատանքների ընթացքում

Հետազոտող ուսուցիչ՝ Թեհմինե Գրիգորյան

Արմավիրի մարզի Տանձուտի միջնակարգ դպրոց

Ղեկավար՝ Սոնիկ Սմբատյան

ԱՐՄԱՎԻՐ-2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցչի մասնագիտական - մանկավարժական առաքելությունը սովորողների ուսուցումը, կրթությունը, դաստիարակությունն ու զարգացումը իրականացնելն է: Ակնհայտ է, որ ուսուցչի մասնագիտական որակներն են ուսուցման մեթոդների, տեխնոլոգիաների, միջոցների ու ձևերի տիրապետումը և այլն: Ուսուցիչը կարող է ունենալ հարուստ գիտելիքներ, լայն մտահորիզոն, բազմակողմանի զարգացածություն, բայց չկարողանալ լուծել սովորողների կրթական, դաստիարակչական և զարգացման խնդիրները: Բնականաբար, ուսուցիչ լինելու համար առաջնային են նրա անձնային և մասնագիտական որակները, գաղափարական, իմացական և արժեքային ուղղվածությունը, նրա մասնագիտական հիմնարար գիտելիքներն ու հմտությունները: Իհարկե՝ բազմազան են տարբեր հեղինակների կողմից հետազոտված և առաջադրված ուսուցչի ընդհանուր որակները, սակայն կարելի է փաստել այն, որ առանցքային ենք համարում նրա անձնային որակները՝ երեխաների հանդեպ սերը, ապրումակցումը, նրանց հետ աշխատելու ձգտումը: Այս ամենը դրսևորվում է մանկավարժական շփման, նրբանկատության, անկեղծության և անմիջականության մեջ:

Վերը նշված որակներով էր օժտված Կոմիտասը: Նրա երգերով մեր ժողովուրդը ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ՝ ինքնաճանաչվեց: Կոմիտասը իր երգով լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ, նրա խեղված վիշտը, իրավազուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը: Կոմիտաս ասելով հասկանում ենք Արևմտյան և Արևելյան Հայաստանի հնագույն ժամանակների մշակույթը՝ պահպանված երաժշտության լեզվով: Կոմիտասը հայի ոգին է, հայի տեսակը: Կոմիտասը հայու տունն է:

Կոմիտասի գիտական և ստեղծագործական գործունեությունը նոր էջ բացեց հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ: Հայ հոգևոր և ժողովրդական երաժշտությանը վերաբերող իր գիտական ուսումնասիրությունները Կոմիտասը ներկայացրել է Եվրոպայի մի շարք քաղաքներում՝ նպատակ ունենալով աշխարհին ներկայացել հայկական երաժշտական հարուստ մշակույթի ավանդույթները և ապացուցել, որ «հայը ունի ինքնուրույն երաժշտություն»: Նա ժողովրդական երգերը գրառել է ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ, գիտնականի վերլուծական դատողությամբ: Երաժշտական բանահյուսության մի շարք հնագույն և բարձրարվեստ նմուշների հայտնաբերումը /հեթանոս հավատալիքներին առնչվող հորովելների եղանակները, վիպական ասքերգերը, անտունիներն ու հոգևոր տաղերը /համարվում է պատմամշակութային խոշոր հայտնագործություն:

Առարկայական և մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործումը Կոմիտասի աշխատություններում

Սողոմոն Սողոմոնյանը ծնվել է 1869 թվականի սեպտեմբերի 26-ին (նոր օրացույցով՝ հոկտեմբերի 8-ին) Փոքր Ասիայի Քյոթահիա քաղաքում: Մկրտվել է ծնունդից երեք օր անց Սուրբ Թեոդորոս եկեղեցում և ստացել Սողոմոն անունը: Հայրը՝ Գևորգ Սողոմոնյանը, մասնագիտությամբ կոշկակար էր, որի ընտանիքը գաղթել էր Նախիջևանի Գողթն գավառի Ցղնա գյուղից, իսկ մայրը՝ Թագուհի Հովհաննիսյանը, արմատներով Բուրսայից էր, և երբ տղան ծնվեց, նա ընդամենը 16 տարեկան էր: Սողոմոնը նրանց միակ զավակն էր: Երկուսն էլ մեծ սեր ունեին երաժշտության նկատմամբ: Տանը խոսում էին միայն թուրքերեն: Երբ Կոմիտասը ընդամենը 6 ամսական էր, նրա մայրը մահացավ, իսկ տասը տարեկանում տղան կորցրեց նաև հորը: Դրանից հետո նրան սկսում է դաստիարակել հորական տատը՝ Մարիամը, որը նրա համար եղել է երկրորդ մայր: Մոր մահը խորը վերք էր թողել Սողոմոնի հոգում, և նրա առաջին ստեղծագործությունները նվիրված էին հենց նրան:

1875 թվականին փոքրիկ Սողոմոնն ընդունվեց իրենց քաղաքի միջնակարգ ուսումնարան, որն ավարտեց 1880 թվականին և հոր նախաձեռնությամբ մեկնեց Բուրսա քաղաք՝ ուսումը շարունակելու: Նա վերադարձավ հայրենի քաղաք հոր մահվանից 4 ամիս անց: Կոմիտասի մանկության ընկերը նրան բնութագրում էր որպես «գրեթե անօթևան». նա լիովին զրկվեց ծնողական խնամքից՝ դառնալով հոգեպես խոցելի, ինչը ևս դարձավ տարիներ հետո նրա մոտ ի հայտ եկած հիվանդության պատճառ:

Սողոմոնի կյանքում շրջադարձային էր 1881 թվականը: Սեպտեմբերին 12-ամյա Սողոմոնը Քյոթահիայի հոգևոր առաջնորդ Գևորգ վարդապետ Դերձակյանի հետ մեկնում է Էջմիածին: Գևորգ Դ Կաթողիկոսը հրահանգել էր, որ Գևորգ վարդապետը իր հետ Քյոթահիայից մի որբ աշակերտ բերի: 20 երեխաների միջև վիճակահանության արդյունքում բախտը ժպտաց Սողոմոնին: Հոկտեմբերի 1-ին Սողոմոնը ներկայացավ կաթողիկոսին: Վերջինս սկսեց խոսել հայերեն, և տղան ոչինչ չհասկացավ: Երբ կաթողիկոսն ասաց, որ տղան այդտեղ անելիք չունի, քանի որ չգիտի հայերեն, Սողոմոնը պատասխանեց, թե եկել է սովորելու ու երգեց. «Լույս Զվարթ» երգելիս Սողոմոնը նկատեց, թե ինչպես կաթողիկոսի աչքերից արցունքներ գլորվեցին և թավալվելով ճերմակ մորուսի վրայով՝ կորան վերարկուի ծալքերի մեջ: Տղան արդեն Գևորգյան ճեմարանի ուսանող էր: Այնտեղ նա վերջապես հոգևոր խաղաղություն գտավ:

1881-1910 թվականներին Սողոմոնը մեծ մասամբ եղել է Էջմիածնում, չնայած երկար ժամանակ է անցկացրել Եվրոպայում: Գևորգյան ճեմարանում ուսուցման առաջին տարում նա սովորեց հայկական ձայնանիշերը՝ խազեր, որոնք զարգացվել էին 19-րդ դարում Համբարձում Լիմոնջյանի և նրա ուսանողների կողմից: Սողոմոնը բացահայտեց երաժշտու-թյան նկատմամբ իր մեծ սերը և սկսեց ձայնագրել Էջմիածնի շրջակայքի գյուղերում երգվող երգերը. գյուղացիները նրան տվել էին «Նոտայի Վարդապետ» անունը: Հրաչյա Աճառյանը «Կյանքիս հուշերից» գրքում գրում է.

> *Պատմում են, թե մի օր Կոմիտասը դաշտում մի խնջույքի ժամանակ լսում է էշի զռալը, իսկույն մի թղթի կտոր է վերցնում և սկսում է ձայնագրել. Կոմիտասը էշին հանդիմանում է, թե «Մյ ապուշ, սխալ ես զռում, զռալ էլ չգիտես, այդպես չեն զռա»:*

1890 թվականի օգոստոսի 9-ին Սողոմոնին շնորհվում է կուսակրոն սարկավագության վեցերորդ աստիճան: Նույն տարում նա Խաչատուր Աբովյանի, Հովհաննես

Հովհաննիսյանի, Ավետիք Իսահակյանի և այլոց ստեղծագործությունների հիման վրա երաժշտություն գրելու իր առաջին փորձերն է անում: 1891 թվականի մարտի 5-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատ պաշտոնական թերթում հայկական ձայնանիշերով տպագրվում է նրա «Ազգային օրհներգ» երգը: Նրա վրա առաջին ազդեցությունը թողեց Քրիստափոր Կարա-Մուրզան, ով ճեմարանում դասավանդեց ընդամենը մեկ տարի՝ 1892 թվականին: Հենց նա Սողոմոնին սովորեցրեց բազմաձայն երգչախմբի կառուցվածքը, որի շուրջ էլ նա կառուցեց իր երաժշտական ձեռքբերումները:
1892 թվականի մայիսին մեկնում է ծննդավայր՝ հագստանալու և առողջությունը վերակազնելու նպատակով: 1893 թվականին ավարտում է Գևորգյան ճեմարանը, իսկ նույն տարվա հոկտեմբերի 5-ին Խրիմյան Հայրիկի կոնդակով ճեմարանում նշանակվում է երաժշտության ուսուցիչ: 1894 թվականի սեպտեմբերի 11-ին Սբ. Գայանեի վանքում ձեռնադրվում է աբեղա՝ *Կոմիտաս* անունով, իսկ 1895 թվականի սեպտեմբերին Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանի կողմից ձեռնադրվում է վարդապետ, որից հետո բոլորը նրան գիտեին որպես *Կոմիտաս Վարդապետ*: Նույն թվականին ավարտին հասցվեց նրա՝ ժողովրդական երգերի առաջին հավաքածուն՝ *«Շար Ակնա ժողովրդական երգերի»*, որը ներառում էր սիրային, հարսանեկան, օրորոցային և պարային 25 երգեր: Այն արժանացավ Էջմիածնի հոգևորականների հետադիմական և պահպանողական խմբակցության դժգոհությանը, ովքեր հալածում էին Կոմիտասին և հեգնանքով անվանում «սեր երգող քահանա» :

1895 թվականի հոկտեմբերի սկզբին Կոմիտաս Վարդապետը մեկնում է Թիֆլիս և վեց ամիս հարմոնիա է ուսանում Մակար Եկմալյանի մոտ: Թիֆլիսը շատ հարմար քաղաք էր Կոմիտասի համար. այն հիշեցնում էր հայկական հողերը, և այնտեղ կար ծխական քահանայի տուն, որտեղ նա կարող էր ապրել: Վեց ամիսների ընթացքում նա խորացրեց հարմոնիայի եվրոպական սկզբունքների մասին գիտելիքները և դրեց հետագայում եվրոպական երկրներում ուսանելու համար անհրաժեշտ գիտելիքների հիմքերը:

1896 թվականի հունիսին Կոմիտասը ժամանեց Բեռլին՝ առանց որևէ համալսարան ընդունվելու: Նրա ընկերները օգնեցին բնակարան գտնելու հարցում: Սկզբնական շրջանում նա մի քանի ամիս ուսանեց Ռիխարդ Շմիդտի մոտ: Այնուհետև նա ընդունվեց հանրահռչակ Բեռլինի կայսերական համալսարան (հետագայում՝ Հումբոլդտի համալսարան): Խրիմյան Հայրիկի օրհնությամբ և Ալեքսանդր Մանթաշյանի հովանավորությամբ նա կարող էր ուսում ստանալ, սակայն այլ միջոցներ չունենալու պատճառով Կոմիտասը ստիպված էր կրճատել սնունդը՝ օրական սնվելով մեկ անգամ կամ առհասարակ հրաժարվելով սննդից:

> *Շաբաթական երկու անգամ, փոխէփոխ, իմ ուսուցչապետներիս մօտն եմ ճաշում. նոցա ընտանիքի մէջ ազատ մուտք ունեմ:*

Կոմիտասը արդյունավետորեն ընդունեց գերմանացի դասախոսների փոխանցած գիտելիքները: Նրանց շարքում էին Բելլերմանը, Ֆլայչերը, Ֆրիդլենդերը: Օսկար Ֆլայչերը հիմնեց Բեռլինի Միջազգային երաժշտական ընկերությունը, որի անդամ դարձավ նաև Կոմիտասը: Նա նմանատիպ միության առաջին ոչ եվրոպացի մասնակիցն էր: Այնտեղ նա 1899 թվականի մայիս և հունիս ամիսներին հանդես եկավ հայկական ժողովրդական և եկեղեցական երաժշտության մասին դասախոսությամբ, որի ընթացքում ներկայացրեց, որ հայկական ժողովրդական երաժշտությունն ունի նախաքրիստոնեական՝ հեթանոս արմատներ:
Բեռլինում ուսանելու տարիներին ուսումնասիրել է կոմպոզիցիայի տեսություն, հոգեբանություն, փիլիսոփայություն, խմբավարություն, մշակել է ձայնը, սովորել

դաշնամուր ու երգեհոն նվագել։ Այդ տարիներին գրել է երգեր, ռոմանսներ, խմբերգեր, մշակել ժողովրդական երգեր։ Շատ մտերիմ էր Ռիխարդ Շմիդտի ընտանիքի հետ։ Վերջինս Կոմիտասի մասին գրել է.

> *Կոմիտասը արդեն մեծ վարպետ է։ Ես հպարտ եմ նրանով։ Զգում եմ, որ ապրում եմ և ապրելու եմ Կոմիտասի մեջ։*

1899 թվականին գերմանական *«Sammelbände der internationalen Musik-Gesellschaft»* հանդեսի 11-12 միացյալ համարում տպագրվում է Կոմիտաս Վարդապետի «Հայ եկեղեցական երաժշտություն» ուսումնասիրությունը։ Բեռլինում 1899 թվականին երաժշտական-փիլիսոփայական-պատմական գիտելիքների բաժինն ավարտելուց հետո նա վերադառնում է Էջմիածին։
1899 թվականին Կոմիտասը վերծանում է առոգանության խազագրությունը (հայտնաբերված հնագույն նմուշը՝ 9-րդ դար)՝ սկզբնաղբյուրների հետազոտության հիման վրա ընդհանրացնելով իր ժամանակի գործնական թվերգության տվյալները։ Ըստ Կոմիտասի՝ ավետարանական տեքստը առոգանությամբ ընթեռնելիս կամ թվերգելիս համակարգի յուրաքանչյուր նշան ստացել է ելևէջային մի կաղապարում ամփոփվող մի քանի նշանակություն, որոնք հաճախ ընդարձակ և ինքնին իմաստավորված դարձվածքներ են (հիշեցնում են ազգային հին վիպական երգերի ելևէջներ)։ Այդ կապակցությամբ Հրաչյա Աճառյանը գրում է.

> *Կոմիտաս օր մը ինծի ըսավ. «Հայկական 50 հատ խազ կա։ Ես կկարծեմ, որ հայոց ձայնանիշը քանի մը ձայն կպարունակե իր մեջ» և ուրախությամբ վրա բերավ. «Ես գաղտնիքը գտեր եմ...»։*

Վերադառնալով Գևորգյան ճեմարան՝ Կոմիտաս Վարդապետը 1899 թվականի սեպտեմբերից սկսեց վարել Մայր Աթոռի դպրապետի պաշտոնը՝ ճեմարանում դասավանդելով երաժշտություն։ Նա հավաքագրեց և սկսեց ղեկավարել մեծ բազմաձայն երգչախումբ։ Այդ պաշտոնում Կոմիտասը մնաց մինչև 1906 թվականը։ Այդ շրջանում էր, որ նա ավարտին հասցրեց տեսական և հետազոտական աշխատանքները, որոնց շնորհիվ էլ իր տեղը զբաղեցրեց երաժշտական էթնոգրաֆիայի ռահվիրաների շարքում։ Ճեմարանի տղամարդկանց բազմաձայն երգչախմբով համերգներ է տվել Երևանում, Թիֆլիսում, Բաքվում։
Կոմիտասը ամառն անց էր կացնում Հայաստանի տարբեր գյուղերում՝ առանձնահատուկ հարաբերություններ հաստատելով գեղջուկների հետ։ Իր «Զեռաց տետրակ հայ սրբազան և գեղջուկ համերգի» մեջ նա գրում է.

> *Գեղջուկը բնութեան հարազատ զաւակն է. ուստի ճաշակել է բնութիւնը բովանդակ հոգւով ու սրտով։ Իր երգելու մեջ բնութիւնը կը խօսէ. որովհետև բնութիւնն է նախ իր մեջ խօսած։ Իր սրտի մէջ բնութեան ծովը կը յուզուի, վասն զի ինքն իսկ բնութեան ալիքներու վրայ կը դեգերէ։ Իր ամբողջ կեանքը իր երգերու մէջն է ներշնչած։ Վերջապէս գեղջուկ երգերը տեսակ տեսակ ասուն հայելիներ են, որոնք զատ զատ, իրենց ծնունդ առած վայրերուն դիրքը, կլիման, բնութիւնը և կեանքը կանդրադարձնեն։*

Այդ ամենի արդյունքում Կոմիտասը լուծեց հայկական գեղջկական երգերի վերարտադրման և պահպանման բարդ գիտական խնդիրը։ 1903 թվականի վերջին 3 տարվա հավաքագրումներից հետո լույս տեսավ ժողովրդական երգերի *«Հազար ու մի*

խաղ» հավաքածուն: Հավաքագրման հարցում նրան օգնեց Մանուկ Աբեղյանը: Այդ հավաքածուի երկրորդ տպագրությունը 1904 թվականին էր, իսկ 1905 թվականին հրատարակվեցին ևս 50 երգեր:

1903 թվականի աշնանը Թիֆլիսից Էջմիածին է հասնում Ջիվանին իր խմբով: Կոմիտասն այդ առիթն օգտագործեց իր աշակերտներին աշուղական երաժշտության բուն աղբյուրի մասին գաղափար տալու նպատակով: Նա իր մոտ հրավիրեց Ջիվանուն և ձայնագրեց Շիրինի «Այգեպան, ի՞նչ ես անում» և Ջիվանու «Ա՛խ, կորան» երգերը, որոնք հետագայում դարձան նրա սիրելի մոտիվները:

1904 թվականին իշխանուհի Մարիամ Թումանյանը Կոմիտասին է ուղարկում Հովհաննես Թումանյանի «Բանաստեղծություններ» հատորը (1903, Թիֆլիս) և առաջարկում օպերա գրել «Անուշ» պոեմի հիման վրա: Նա ձեռնամուխ եղավ այդ գործին, կատարեց լայնածավալ աշխատանք, կազմեց օպերայի բեմականացման ծրագիրը, սակայն այդ աշխատանքը անհայտ պատճառներով երբեք չիրապա-րակվեց:

1905 թվականի վերջին արդեն մտածում էր ճեմարանի ուսուցչությունից հրաժարվելու մասին, քանի որ նյարդային սաստիկ տկարություն ուներ: 1906 թվականին Կոմիտասն արդեն չէր դասավանդում ճեմարանում:

1906 թվականի դեկտեմբերին սկսվեցին հայ ժողովրդական և հոգևոր երգերի մշակումներով համերգները Փարիզում: Այդ համերգներից մեկում տեղի ունեցած մի դիպվածի մասին Հրաչյա Աճառյանը գրել է.

> *Իմացեր եմ, որ 1906 թուին Փարիզի մէջ Կոմիտասի ցուցադրական մէկ համերգէն վերջ, ֆրանսիացի յայտնի կոմպոզիտոր-դաշնակահար Կլոդ Դեբիւսին, ծունկի գալով կը համբուրէ Կոմիտասի ձեռքերը, ըսելով. «Հանճարեղ հայր Կոմիտաս, Ձեր երաժշտական հանճարին առջև կը խոնարհիմ...»:*

1907 թվականի հունիսին Արշակ Չոպանյանի հետ մեկնում է Իտալիա: Կոմիտասը շատ էր հավանել այդ երկիրը. «Իտալիան շատ գեղեցիկ է, բայց մեր դժբաղդ հայրենիքն աւելի գեղեցիկ է»: Բնակվում էին Սբ. Մարկոսի հրապարակի հյուրանոցներից մեկում: Կոմիտասը 3 շաբաթ աշխատեց Վենետիկի վանքում, իսկ մեկնելով Հռոմ՝ հանդիպեց Պիուս 10-րդ Պապին, որի օգնությամբ թանգարաններ մուտքի հնարավորություն ստացավ, որտեղ կատարեց բազմաթիվ ուսումնասիրու-թյուններ: Իտալիայից հետո մեկնեց Բեռլին, իսկ 1908 թվականի սկզբին՝ Թիֆլիս: Նույն թվականի հունվար-ապրիլ ամիսներին Վահան Տեր-Առաքելյանի հետ համերգներ ունեցավ Իգդիրում, Վաղարշապատում, Երևանում և Բաքվում: Կոմիտասի համերգային շրջագայությունները նպատակ ունեին հասարակությանը ծանոթացնել հայ ժողովրդական երաժշտությանը և այդ ասպարեզում կատարած ռաումնասիրություններին: Իր դասախոսությունները Կոմիտասը ուղեկցում էր ժողովրդական երգերի ոգեշունչ մեկնաբանմամբ: Ներքին մեծ հուզմունքով կատարում էր քնարական, աշխատանքային, ծիսական և այլ երգեր, ղեկավարում իր կազմակերպած երգչախմբերը, որոնց մասնակից էր դառնում տեղի հայ երիտասար-դությունը:

1909 թվականի մարտին Թիֆլիսի Արքունական թատրոնում տեղի ունեցավ միջազգային եկեղեցական երաժշտության փառատոն, որում Կոմիտասի ղեկավարած երգչախումբը գրավեց առաջին տեղը:

Արտասահմանյան շրջագայություններից հետո հետադիմական կղերականությանը Էջմիածնում ծանր կացություն ստեղծեց Կոմիտասի համար։ Նա պաշտոնական նամակով դիմեց կաթողիկոս Իզմիրլյանին.

> *Քսան տարի է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան եմ: Մտել եմ այս հաստատութեանը ծառայելու նպատակով: Քսան տարուան ընթացքում շրջապատն ինձ թոյլ չի տուել այն անելու, ինչ կարող էի, որովհետև տեսայ միայն որոգայթ և ոչ արդարութիւն: Նեարդերս թուլացել են, այլևս տոկալու ճար ու հնար չունեմ: Որոնում եմ հանգիստ, չեմ գտնում. ծարաւի եմ ազնիւ աշխատանքի, խանգարում են. փափագում եմ հեռու մնալ՝ խցել ականջներս՝ չը լսելու համար, գոցել աչքերս՝ չը տեսնելու համար, կապել ոտքերս՝ չը գայթակղվելու համար, սանձել զգացումներս՝ չը վրդովուելու համար, բայց, զի՛ մարդ եմ, չեմ կարողանում: Խիղճս մեռնում է, եռանդս պաղում է, կեանքս մաշուում է, և միայն վարանքն է բուն դնում հոգուս ու սրտիս խորքում: Եթէ հաճոյ է Վեհիդ ինձ չը կորցնել, այլ գտնել, արտասուելով աղերսում եմ՝ արձակեցէք ինձ Ս. Էջմիածնայ Միաբանութեան Ուխտից և նշանակեցէք Սևանայ Մենաստանի մենակեաց: Քսան տարին կորցրի, գոնէ մնացած տարիներս շահեցնեմ և անդորրութեամբ գրի առնեմ ուսումնասիրութիւններիս պտուղները՝ իբր առաւել կարևոր ծառայութիւն հայ տառապեալ սուրբ Եկեղեցւոյ և Գիտութեան:*

Իզմիրլյանը մերժեց Կոմիտասի ուղերձը՝ դրանով իսկ ծանրացնելով նրա վիճակը։ Մեկ տարի անց՝ 1910 թվականի մայիսին, Կոմիտասը հեռացավ Էջմիածնից՝ հաստատապես որոշելով այլևս երբեք չվերադառնալ:

1910 թվականի սեպտեմբերին Կոմիտասը ժամանում է Կոստանդնուպոլիս։ Մինչև այնտեղ հասնելը համերգներ է ունենում Էսկի-Շեհիրում և Պրուսիայում։ Կոստանդնուպոլսում ստեղծում է «Գուսան» երգչախումբը 300 անդամներով։ Նա բազմաթիվ դասախոսություններ և համերգներ է ունենում ամբողջ Եվրոպայում, Թուրքիայում և Եգիպտոսում՝ ներկայացնելով մինչև այդ շատ քիչ ճանաչված հայկական երաժշտությունը։ Երգչախմբի մի քանի մասնակիցներ՝ Բարսեղ Կանաչյանը, Միհրան Թումաճանը, Վարդան Սարգսյանը, Վաղարշակ Սրվանձտյանը, Հայկ Սեմերճյանը, երաժշտության տեսության դասեր են առել Կոմիտասից և հայտնի են որպես *« Կոմիտասյան հինգ սաներ»* : Երգչախմբի առաջին համերգը տեղի ունեցավ 1910 թվականի նոյեմբերին «Պըտի Շան»-ի ձմեռային թատրոնում:

1910 թվականին Կոմիտասն ամփոփեց «խազաբանության տարրերը»:

> *Իրաւ է, ես գտել եմ հայ խազերի բանալին, և նոյնիսկ կարդում եմ պարզ գրուածքները, բայց դեռ վերջակէտին չեմ հասել. զի իւրաքանչիւր խազի խորհրդաւոր իմաստին թափանցելու համար, նոյնիսկ տասնեակ ձեռագիրներ պրպտելով, երբեմն ամիսներ են սահում, իսկ ձեռքիս տակն եղած խազերը, այն էլ անուն ունեցողները, 198 հատ են առայժմ, մի կողմ թողնենք դեռ անանուն խազերը, որոնք խիստ շատ են:*

1911 թվականի ապրիլին Եգիպտոսի «Մանթաշով» նավթընկերության ընդհանուր գործակատար Հովհաննես Մութաֆյանի հրավերով Կոմիտաս Վարդապետը մեկնում է Եգիպտոս, որտեղ համերգներ և բանախոսություններ է կազմակերպում

Ալեքսանդրիայում և Կահիրեում: 1911 թվականի մայիսին Ալեքսանդրիայում համերգ տված երգչախումբը երկսեռ էր:
Կոմիտաս Վարդապետը ժամանակի հետ քայլող անձնավորություն էր. նա ուներ կնիքներ, այցեքարտ, անվանական ծրար, կրում էր մողեսի տեսքով կրծքազարդ և իր սիրելի սաներին ու մտերիմներին անվանում էր *«քէրթէնքէլէ»*՝ մողես:
1911 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին մեկնում է Փարիզ, այնտեղից էլ Անգլիա՝ հանգստանալու և կազդուրվելու համար: Վերադառնալով Կոստանդնուպոլիս՝ շարունակում է բազմաթիվ համերգներ տալ երգչախմբի հետ: 1914 թվականի հունիսին Փարիզում մասնակցում է Միջազգային երաժշտագիտական ընկերակցության համաժողովին՝ Լուի Լալուայի նախագահությամբ, որտեղ ունենում է բանախոսություններ:
1915 թվականի ապրիլի 24-ին երիտթուրքական վարչակարգը շուրջ 600 հայ մտավորականների հետ ձերբակալեց նաև Կոմիտաս Վարդապետին և աքսորեց Չանղր (Կոստանդնուպոլսից 800 կմ հեռու): Երկու շաբաթ անց եվրոպական և ամերիկյան դեսպանների միջնորդությամբ նա ազատ արձակվեց և վերադարձավ Կոստանդնուպոլիս:
Աքսորից վերադառնալուց հետո Կոմիտաս Վարդապետի առողջական վիճակը կտրուկ վատացավ: Եղեռնի քստմնելի դրվագները, իր աշխատանքների կորուստը ծանր ազդեցին Վարդապետի նուրբ և զգայուն ներաշխարհի վրա, և նա կորցրեց հոգեկան անդորրը՝ ծանր և խորը վերապրելով իրականության և իր ժողովրդի կործանման ողբերգությունը: Նրա թողած վերջին գրության մեջ, երբ բորբոքված ուղեղում դեռ չէին մարել գիտակցության վերջին կայծերը, հնչում է անելանելիությունն ու խոր հուսահատությունը.

> *Հոտն անհովիւ՝ մոլոր ու շփոթ, աներևույթ և անզուսպ ալիքներ յախուռն կը յուզին ի խորս մեր հալածական և ողբեգալի կենաց ծովու: Անմիտ որսորդներ բոլորած՝ միամիտ ձկներ ցանցած: Մթնոլորտը թոյն կը տեղայ, բուժիչ ուժ չկայ: Աւերած, սարսափ ու սանձարձակ կեղեքում մէկ կողմէն, անտարբերություն, օտարամոլություն ու ցեխոտ սրտեր միւս կողմէն... Ու՞ր է մեր խոհական Խորենացին. թող ելլէ՛ արյիւնաքամ հողու տակէն և ողբայ մեր խակերու սիրտն ու հոգին, միտքն ու գործը... Սիրտս փլած է...*

Վարդապետի մոտ ակնհայտորեն խորանում էին հետապնդման մանիայի ախտանշանները, և ըստ հուշագիրների՝ յուրաքանչյուր ցնցում և ձայն սարսափեցնում էր նրան:

Վարդապետին թվում էր, թե թուրքերն անընդհատ հետապնդում են իրեն, ուստի և նա ձգտում էր բացարձակ միայնության և լռության, հաճախ չէր ընդունում իր վաղեմի բարեկամներին և ծանոթներին, իրեն տեսնել ցանկացող երկրպագուներին: Բժշկապետ Վահրամ Թորգոմյանը 1916 թվականի աշնանը, խորհրդակցելով Կոստանդնուպոլսի հայտնի հոգեբույժ դոկտոր Գոնոսի հետ, Վարդապետին տեղափոխեց Շիշլիի *Hôpital de la Paix* հիվանդանոցը, ուր Վարդապետը մնաց մինչև 1919 թվականը: Իր պայծառատեսության պահերին նա բազմիցս բողոքել է հիվանդանոցի անտանելի պայմաններից. *«Մնունդը՝ շան լափ, կեղտ ու ոջիլ, միակ բուժումը՝ մեկուսացում և անտարբեր վերաբերմունք»*: Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հայ գաղութը Վարդապետի վիճակը բարելավելու նպատակով որոշեց նրան ուղարկել Ֆրանսիա:

1919 թվականի ապրիլին Կոմիտասին տեղափոխեցին Փարիզի Վիլ-Եվրայի հոգեբուժարան, իսկ 1922 թվականի օգոստոսին միջոցների սղության պատճառով՝ Վիլ-Ժուիֆի հոգեբուժարան, ուր Վարդապետը մնաց մինչև իր կյանքի վերջը:
Իրականում Կոմիտաս Վարդապետի հիվանդության վերաբերյալ կան բազմաթիվ վարկածներ: Մինչ օրս նրա հիվանդությունն ու մահվան ստույգ պատճառը մնում է անհայտ: Վերջինս անսպառ նյութ է հանդիսանում գիտական և պատմական ուսումնասիրությունների, քննարկումների համար:
Կոմիտաս Վարդապետը վախճանվեց 1935 թվականի հոկտեմբերի 21-ին առավոտյան ժամը 6-ին Վիլ-Ժուիֆի հիվանդանոցում՝ գարշապարի թարախակալումից առաջացած բարդությունների հետևանքով: Մահից հետո ստեղծվեց Կոմիտաս Վարդապետի մահադիմակը: 1936 թվականին նրա աճյունը փոխադրվեց Երևան և թաղվեց Կոմիտասի անվան պանթեոնում:

Հիվանդության տարիներին զգալի տուժել է նրա ազգագրական և գիտական ձեռագիր ժառանգությունը: 1950-ական թվականներին նրա ձեռագրերը Փարիզից տեղափոխվեցին Երևան:
Անգնահատելի է Կոմիտասի հավաքչական ու գիտական աշխատանքը: Նա ժողովրդական երգերը գրառել է ազգագրագետի վարպետությամբ, գեղագետի պահանջկոտությամբ և գիտնականի վերլուծական դիտողականությամբ: Երաժշտական բանահյուսության մի շարք հնագույն և բարձրարվեստ նմուշների հայտնաբերումը (հեթանոս հավատալիքներին առնչվող հորովելների եղանակները, «Սասունցի Դավիթ», «Մոկաց Միրզա» վիպական ասերգերը, անտունիներն ու հոգևոր տաղերը) համարվում է պատմամշակութային խոշոր հայտնագործություն, իսկ հավաքած ավելի քան 4000 գեղջկական երգերը՝ հայ ժողովրդական երգարվեստի անթոլոգիա: Կոմիտասը տեսական աշխատություններում բացահայտել է ժողովրդական երաժշտության կենսական հիմքերը, բնութագրել հայ երգի գեղագիտական արժանիքները, վերլուծել տեսակներն ու կառուցվածքային հատկանիշները: Նա հիմնականում գրել է մեներգային և խմբերգային երգեր, որոնք սերում են ժողովրդական կամ հոգևոր սկզբնաղբյուրից. «Առ գետս Բաբելացվոց» սաղմոսը, «Ո՞ւր ես գալի, ա՜յ գարուն» կանտատը (Հովհաննես Հովհաննիսյանի խոսքերով), «Մութն էր երկինքը» ռոմանսը (Հովհաննես Թումանյանի խոսքերով), «Կաքավի երգը», «Գարուն ա», «Քելեր, ցոլեր», «Լոռու գութաներգ», «Անտունի», «Ծիրանի ծառ» երգերը, նաև հարսանեկան, վիճակի, պարերգային և այլ շարքեր: Կոմիտասը դիմել է նաև այլ ժանրերի. եզակի են նրա «Դաշնամուրային պարերը», որտեղ կիրառել է ժամանակի համաշխարհային երաժշտության համար նոր և խիստ ինքնատիպ միջոցներ: Քնարական-կենցաղային «Անուշ» (ըստ Հովհաննես Թումանյանի), երգիծական-կենցաղային «Քաղաքավարության վնասները» (ըստ Հակոբ Պարոնյանի), պատմահայրենասիրական «Վարդան» (հավանաբար՝ ըստ Ռաֆայել Պատկանյանի) և դյուցազնահերոսական «Սասունցի Դավիթ» օպերաների ստեղծման աշխատանքները կոմպոզիտորին չի վիճակվել ամբողջացնել: «Վարդան» օպերայի մի քանի ուրվագրերով, «Սասունցի Դավթի» մի փոքր դրվագով սահմանափակվում են մեզ հասած ձեռագիր նյութերը: Ուսումնասիրությունների համաձայն, Կոմիտասն ավարտել է «Քաղաքավարության վնասներ» օպերայի 1-ին և 2-րդ, մասամբ 3-րդ պատկերները: Մեզ են հասել հատվածներ «Անուշ»-ից, որոնք վկայում են օպերայի վառ ազգային ուղղվածության մասին: Կոմպոզիտորն օգտագործել է թե՛ գեղջկական մեղեդիներ, թե՛ ինքն է գրել ժողովրդական երգի նման

պարզ, մատչելի մեղեդիներ։ Օպերայում կան երկու ավարտված վոկալ հատվածներ, որոնց համար Կոմիտասն օգտագործել է նաև գուսանական երգեր։
«Անտունին» խորը հոգեբանական ստեղծագործություն է, որտեղ նկարագրվում են «տնավեր» պանդուխտի ապրումները, իղձերն ու կարոտը։ Երաժշտության և պոեզիայի օրգանական միասնության շնորհիվ Կոմիտասը ստեղծել է հայ պանդուխտի արտակարգ ուժով համակված կերպարը։ Մեղեդին աչքի է ընկնում հուզական լարվածությամբ և դրամատիզմով, իսկ հաճախակի հանդիպող պաուզաներն հառաչանք են հիշեցնում։ «Անտունիի» հարուստ և ծավալուն ձևը՝ օժտված ներքին միասնական զարգացմամբ, թույլ է տալիս խոսելու երգային ժանրի սիմֆոնիզացիայի մասին։ Հիմնական կերպարի բացահայտմանն է նպաստում նաև դաշնամուրային նվագակցությունը։ Այն աչքի է ընկնում մեծ ձայնածավալով. կոմպոզիտորն ազատորեն օգտագործում է թե՛ ստորին, թե՛ վերին ռեգիստրները՝ ստեղծելով խորը ու, միաժամանակ, թափանցիկ հնչողություն։ Այս ստեղծագործության մասին Կլոդ Դեբյուսին գրել է.

> *Եթե Կոմիտասը գրեր միայն «Անտունին», այդ էլ բավական կլիներ նրան խոշոր արվեստագետ համարելու։*

Իր անհուն խորությամբ առանձնանում է *«Պատարագը»*, որը կանտատ-օրատորիայի դասական նմուշներից է և մինչև այսօր ներկա է եկեղեցու ծիսակատարության մեջ։ Պատարագի մշակումը նա սկսեց 1892 թվականին, բայց երբեք չավարտեց՝ Առաջին Համաշխարհային Պատերազմի սկսման պատճառով։ «Պատարագը» առաջին անգամ հրատարակվել է 1933 թվականին Փարիզում և առաջին անգամ ձայնագրվել 1988 թվականին Երևանում։
Հավաքագրելով և պահպանելով հայկական ժողովրդական երգերը՝ Կոմիտասը պահպանեց Արևմտյան Հայաստանի մշակութային ժառանգությունը, որը հակառակ դեպքում կկորսվեր ցեղասպանության արդյունքում։ Նրա աշխատանքները լույս տեսան Հայաստանում Ռոբերտ Աթայանի մանրամասն ծանոթագրություններով հագեցած հրատարակությամբ։ Հետագայում գերմանական պոեզիայի ինը երգեր, որոնք գրվել էին Բեռլինում լինելու տարիներին, հանվեցին արխիվներից և հնչեցին սոպրանո Հասմիկ Պապյանի կատարմամբ։
Մեծ հանճարի գրիչը չի սահմանափակվել միայն երաժշտությամբ. Կոմիտասը տասնյակ բանաստեղծությունների հեղինակ է։ Սակայն դրանք վարդապետի կենդանության օրոք չեն տպագրվել։ Կոմիտասն իրեն չէր համարում կոչումնավոր բանաստեղծ, նա գրում էր ինքն իր համար։

Քեզ չըսիրե՞լ, գեհեն կորել
Ու կըրակով հոգին փորել։
Քեզի սիրել՝ դըրախտ երթալ
Ու վարդերով քընանալ։

Կոմիտասի բանաստեղծությունների ժողովածուն հրատարակվեց նրա ծննդյան 100-ամյակին Լևոն Միրիջանյանի խմբագրությամբ։
2008 թվականի հուլիսի 6-ին Քվեբեկի 400-րդ տարեդարձի կապակցությամբ Քվեբեկի Ազգային Ժողովի հարևանությամբ տեղի ունեցավ Կոմիտասի բրոնզե կիսանդրու բացումը՝ ի ճանաչումն երաժշտության մեջ ընդհանուր առմամբ և հայկական երաժշտության մեջ մասնավորապես նրա ունեցած ներդրման։ Մինչ այդ Կոմիտասի

գրանիտե և բրոնզե հուշարձաններ էին կանգնեցվել Դետրոիդում (1981 թվական)՝ որպես հարգանքի տուրք մեծ երաժշտին և հիշեցում Մեծ Եղեռնի մասին:
2008 թվականի սեպտեմբերին թողարկվեց Կոմիտասի լավագույն երգերի նախադեպը չունեցող ձայնասկավառակը Իզաբել Բայրաքդարյանի կատարմամբ և Հայաստանի ֆիլհարմոնիկ կամերային նվագախմբի ու դաշնակահար Սերոժ Կրաղջյանի նվագակցությամբ: Այս ձայնասկավառակը «Լավագույն վոկալ ձայնագրություն» անվանակարգում նոմինացվել էր Գրեմմիի: 2008 թվականի հոկտեմբերին Հյուսիսային Ամերիկայում Իզաբել Բայրաքդարյանի համերգային շրջագայությունը լավագույնս ներկայացրեց Կոմիտասի երաժշտությունը Տորոնտոյում, Լոս Անջելեսում, Սան Ֆրանցիսկոյում, Վանկուվերում, Բոսթոնում, Նյու Յորքի Կարնեգի համերգասրահում: Նրան նվագակցում էին Էն Մենսոնի վարած Մանիտոբայի կամերային նվագախումբը և դաշնակահար Սերոժ Կրաղջյանը: Հիշատակման շրջագայությունը նվիրված էր ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին և հովանավորվել էր Ցեղասպանության և մարդու իրավունքների պաշտպանության ուսումնասիրության միջազգային ինստիտուսի (Զորյան ինստիտուտի բաժիններից մեկը) կողմից:
1987 թվականին երևան եկավ «Իմ Կոմիտասը» ֆիլմը, որում նկարահանվել են մաեստրո Հովհաննես Չեքիջյանը և անվանի երգչուհի Հասմիկ Պապյանը, ռեժիսորն է Լևոն Մկրտչյանը: Ֆիլմն անդրադառնում է նաև 1915 թվականի Հայոց Մեծ Եղեռնին:
1956 թվականին հրատարակվեց Լյուսի Թարգյուլի «Կոմիտաս» գիրքը: Կոմիտասին է նվիրված Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը, որը պատկերազարդել է գեղանկարիչ Գրիգոր Խանջյանը: Կոմիտասի կերպարին ու ստեղծագործությանն անդրադարձել են նաև մի շարք գիտնականներ, գեղանկա-րիչներ, քանդակագործներ, երաժիշտներ, գրողներ և ուրիշներ:
Կոմիտասի անունով են կոչվել Հայաստանի պետական լարային քառյակը, Երևանի կոնսերվատորիան, Կամերային երաժշտության տունը, պողոտա, զբոսայգի, Ստեփանակերտի երաժշտական դպրոցը, երգչախմբեր արտերկրում, արձաններ են կանգնեցվել Երևանում, Վաղարշապատում, Փարիզում և այլուր: 2015 թվականի հունվարի 29-ին Երևանում Կոմիտասի անվան զբոսայգում տեղի ունեցավ Կոմիտասի թանգարան-ինստիտուտի բացումը:
2014 թվականի վերջից կինոռեժիսոր Վիգեն Չալդրանյանն սկսեց իր նոր՝ «Վարդապետի լռությունը» խաղարկային ֆիլմի նկարահանումները: Այն նվիրված է Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին: Ֆիլմը նկարահանվել է Հայաստանի ազգային կինոկենտրոնի աջակցությամբ: Գլխավոր հերոսն Էդգար Նովենց անուն-ազգանունով ժամանակակից ճանաչված մի գրող է, որը «Վարդապետի լռությունը» վերնագրով վեպ է գրում Կոմիտասի մասին: Նրա գրքի միջոցով հետադարձ հայացք է գցվում 1915-1935 թվականներին Կոմիտասի կյանքի ողբերգական իրադարձություններին: Ֆիլմի պրեմիերան տեղի է ունեցել 2015 թվականի դեկտեմբերի 25-ին:
2015 թվականի ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին, Ստամբուլի հայաշատ Շիշլի թաղամասի Ջումհուրիյե պողոտայում ցուցատախտակ տեղադրվեց այն տան պատին, որտեղ ապրել է Կոմիտասը և որտեղից ձերբակալվել է 1915 թվականի ապրիլի 24-ին:
2015 թվականի նոյեմբերի 6-ին Սանկտ Պետերբուրգի Վասիլեոստրովսկի վարչական շրջանի կենտրոնական Կամսկի այգում տեղի ունեցավ հայ հանճարի հուշարձանի բացման արարողությունը: Վարդապետի 3,3 մետր բարձրությամբ և 1,7 մետր պատվանդանով գրանիտե հուշարձանի հեղինակը Ռուսաստանի նկարիչների

միության անդամ, Սանկտ Պետերբուրգի գեղարվեստաարդյունաբերական ակադեմիայի դոցենտ Լևոն Բեյբությանն է, ճարտարապետը՝ Մաքսիմ Աթայանցը:

Անձնական նկարագիր. միջահասակ, նիհար, ջղուտ և զգայուն, դեմքը դեղնավուն, աչքերը արտահայտիչ և վառվռուն, գլուխը ճաղատ, մորուքը ո՛չ «վարդապետավայել», այլ ծնոտի տակ միայն թողած, այսպես կոչված վագներյան, ինքը արագաքայլ և անհամբեր, միշտ շտապող, միշտ աշխատասեր, կյանքից գոհ, լավատես... Ապրում էր, կարելի է ասել, սպարտական կյանքով, ուտելու մեջ պարզ և չափավոր, չէր խմում ու չէր ծխում. քնում էր գարուն թե ձմեռ բաց պատուհանով և, որ գլխավորն էր, պառկում էր ուղղակի հատակի վրա, առանց ներքնակի և բարձի: Նոտագրության մեջ մաքրասեր էր, գրում էր գեղեցիկ, իր իսկ տողած թղթերի վրա, այնպես որ նրա ձեռագրերից կարելի էր ուղղակի կլիշե պատրաստել:

- Գարեգին Լևոնյան

Կոմիտաս մեծ ընթերցասեր մըն էր, ուժեղ էր հայոց լեզվի մեջ, և հայոց պատմությունը շատ լավ գիտեր: Մասնավորապես կկարդար Մովսես Խորենացի և Նարեկացի, իսկ Աբովյանին «Վերք Հայաստանին» կանվաներ իր մասունքը: Կոմիտաս քաջ պարող մըն ալ էր... Մարդկային բացառիկ առաքինություններու ծով էր: Չափազանց աշխատասեր, աննկուն կամքի տեր, անկեղծ, բարեհոգի, ընկերասեր, քաղցր ու համեստ՝ ամենուն նկատմամբ: Մաքրակրոն էր ան և մեծ հայրենասեր մը: Բացի իր երաժշտական հանճարից, այլ շնորհքներ էլ ուներ. բանաստեղծ էր և ճարտար կոմիկ դերասան: Վերին աստիճանի սրամիտ, կենսուրախ և պատրաստաբան էր Կոմիտաս և սիրված ճեմարանի մեծեն ու փոքրեն:
Կոմիտասի ձայնը մեծ դիապազոն ուներ: Բեռլին գտնված միջոցին հայ ժողովրդական երգերը անձնապես ցուցադրած համերգեն վերջ, Բեռլինի օպերայի տնօրենը անձամբ կհրավիրե զինքը իբրև օպերայի գլխավոր երգիչ և կխոստանա բացառիկ վճարում: Կոմիտասը կպատասխանե անոր. *«Իմ երգչի կարողությունները մեկ նպատակի միայն կծառայեն, մեծ ժողովուրդիս երգն ու երաժշտությունը ծանոթացնել երաժշտական աշխարհին և ապացուցել, որ հայ ստեղծագործ ժողովուրդը սկզբնական դարերեն ունեցեր է իր ինքնուրույն երգն ու երաժշտությունը»*...:

- Հրաչյա Աճառյան

Կոմիտասը չափազանց ուրախ և չափազանց աշխատասեր էր: Նրա բնավորությունը միալար չէր, նա խիստ դյուրագրգիռ և երբեմն էլ բարկացող էր: Սակայն նրա բարկությունը նման էր քամիներից քշվող ամպի ծվեններին, որոնց միայն մի վայրկյան է հաջողվում արևի լույսը խափանել, բայց այդ ծվենների արագորեն անցնելուց հետո՝ նորից արև, նորից զվարթություն և նորից ծիծաղ է տիրապետում: Կոմիտասի զգայուն հոգին տառապում էր ուրիշների վշտերով: Նա հեռուներում գտնվող իր ընդունակ, բայց չքավոր աշակերտներին օգնում էր հնարավորին չափ:

- Փանոս Թերլեմեզյան

Կոմիտասը մեր ժողովրդի հպարտությունն է, նրա գործը՝ մեր ազգային անսպառ հարստությունը... Նա հայտնագործել է մեր ազգային երգը, հայկական երաժշտությունը, ազգային մելոսը՝ ինքնուրույն և անաղարտ: Նա հիմն է դրել ազգային երաժշտական կուլտուրային... Կոմիտասը հայ երգով լույս աշխարհ հանեց դարերի խավարի մեջ կեղեքված ժողովրդի խուլ բողոքն ու ցասումը բռնության, ստրկության դեմ. նրա խեղդված վիշտը, իրավազուրկ կյանքը և պայծառ ապագայի հանդեպ տածած հավատը:

- Ավետիք Իսահակյան

Կոմիտասի երաժշտությունը մի այնպիսի ոճական անաղարտություն է, մի այնպիսի վսեմաշուք լեզու, որ դժվար է շրջանցել այն, դժվար է այս կամ այն կերպ նրան չառնչվելը, նրա ազդեցությունը չկրելը: Ես միշտ գերված եմ եղել և գերված կմնամ Կոմիտասի երաժշտությամբ:

- Արամ Խաչատրյան

Ոչ ոք ինձ չի կարող մեղադրել չափազանցության համար, եթե ես ասեմ, որ Կոմիտասի այդ համերգը (Փարիզ, 1906) մի հեղաշրջում էր և իր հայտնությամբ զարմացրեց մեզ: Ներկաներից ոչ ոք, ի բացառյալ նուրբ գիտակների, պատկերացնել չի կարող այդ արվեստի գեղեցկությունը, որը, ըստ էության, ոչ եվրոպական է, ոչ արևելյան, բայց եզակի է իր տեսակի մեջ:

- Լուի Լալուա

Ես զարմանում եմ, որ 25 տարի սրանից առաջ փոքրիկ Հայաստանը տվել է մի Կոմիտաս, որի ստեղծագործություններն իրենց գեղարվեստական կառուցվածքի և արժեքի տեսակետից հազիվ կարելի կլիներ սպասել Ռուսաստանի խոշոր կենտրոններում ապրող նույն ժամանակի ամենահայտնի ռուս կոմպոզիտորներից:

- Միխայիլ Գնեսին

Հայ ժողովրդական երգը հանձինս Կոմիտասի գտել է իր ամենացայտուն վարպետին: Նա ուսանելի է շատ տեսակետներից: Եվ հայ երաժշտության զարգացմանը նախանձախնդիր ամեն ոք նախ պետք է լիովին ուսումնասիրի և հասկանա Կոմիտասին և ապա միայն սկսի ստեղծագործել:

- Թոմաս Հարտման

Եզրակացություն

Ծանոթանալով հայ դասական երաժշտության հիմնադիր Կոմիտասի կյանքին և ստեղծագործական գործունեությանը՝ ևս մեկ անգամ համոզվեցի, որ Տիեզերքը նրա նման անհատների ծնունդով օրհնել է հայ ժողովրդին, ինչու չէ՝ նաև ամբողջ աշխարհին:

Անգնահատելի է Կոմիտասի ավանդը բանահավաքչության գործում: Շրջելով բազմաթիվ բնակավայրերով՝ հմուտ երաժիշտը «ձայնագրել է» հայ ժողովրդական երգարվեստի տարբեր ժանրերին պատկանող մի քանի հազար երգ՝ այսպիսով մոռացումից փրկելով հայ ժողովրդի ստեղծած մի ամբողջ մշակույթ: Այդ երգերը իր գիտական և ստեղծագործական երկերի ատաղձն են կազմում: Նրան անվանել ենն հայկական երաժշտության փրկիչ:

Հասկացա, որ Կոմիտասը երաժշտական մշակույթի բազմակողմանի գործիչ է, հայ ժողովրդական երգի հիանալի գիտակ: Նա հայտնաբերել և գրի է առել գեղջկական երգի հազարավոր նմուշներ: Նա նաև այդ երգերի անզուգական կատարողն էր: Իր հավաքածուի լավագույն նմուշները նա մշակել է ձայնի և դաշնամուրի համար, բազմաձայն դարձրել և ներկայացրել երկսեռ երգչախմբի կատարմամբ՝ ստեղծելով արտահայտիչ երաժշտական կերպարներով հարուստ բարձրարվեստ ստեղծագործություններ:

Կոմիտասը նաև երաժշտագետ է: Հայտնի են հայ հոգևոր և ժողովրդական երգարվեստի ուսումնասիրությանը նվիրված նրա աշխատությունը:

Հասկացա, որ Կոմիտասը աշխարհին ցույց տվեց հայկական տոհմիկ երգը՝ առանց աղավաղումների: Նա բազմաձայնության միջոցով ներկայացրեց հայ ժողովրդի հոգու խորությունն ու ինքնատիպությունը:

Մեծ կոմպոզիտորի, երգահանի պայծառ ու վսեմ հիշատակը երբեք չի ջնջվի եկող սերունդների սրտերից: Նրա ստեղծագործությունները հայ ժողովրդին օգնում է ապրել, պայքարել ու դարեդար ապրեցնել հայ ժողովրդի երգն ու անունը:

Օգտագործված գրականություն

1. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտաս Վարդապետ (1869-1935)», Երևան, 2009
2. Գուրգեն Գասպարյան, Մարինե Մուշեղյան «Կոմիտաս Վարդապետ. ուսումնասիրություններ և յոդուածներ», Երևան, 2007
3. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտասը ժամանակակիցների հուշերում և վկայություններում», Երևան, 2009
4. Գուրգեն Գասպարյան, «Կոմիտաս Վարդապետ. նամականի», Երևան, 2009:
5. Ժամանակակիցները Կոմիտասի մասին, Երևան, 1960:
6. Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1977, էջ 66-69:
7. Համացանց՝ ,,Կոմիտասի լուսանկարներ''